

# Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտ (FATCA)

FATCA (Foreign Account Tax Compliance Act) օրենքն ԱՄՆ կոնգրեսի կողմից ընդունվել է 2010թ. մարտին 18- ին և ուժի մեջ է մտել 2013թ. հունվարի 1-ին: FATCA- ի նպատակն է կանխարգելել ԱՄՆ քաղաքացիների կողմից օտարերկրյա ֆինանսական կառույցների հետ գործարքների միջոցով հարկերից խուսափելու դեպքերը:

Այն պարտավորեցնում է բոլոր ոչ ամերիկյան ֆինանսական հաստատություններին նույնականացնել իրենց հաճախորդներին և ԱՄՆ հարկատուների հաշիվների մասին տեղեկատվություն փոխանցել ԱՄՆ հարկային ծառայությանը (Internal Revenue Service, IRS): Բանկի կամ Բանկի հաճախորդների կողմից FATCA-ի պահանջները չկատարելու դեպքում նախատեսված է պատժամիջոցների կիրառում:

Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարկերից խուսափելու դեմ պայքարում իրենց համագործակցության բարելավման նպատակով կնքել են համաձայնագիր:

Վերոնշյալ համաձայնագրից բխող պարտականությունների իրականացման նպատակով «Մեյլաթ բանկ» ՓԲԸ- ն ստացել է Համաշխարհային միջնորդային նույնականացման հետևյալ համարը (GIIN number)՝ LEJ5IK.99999.SL.051:

ՀՀ- ի և ԱՄՆ- ի միջև կնքված համաձայնագրի համաձայն «Մեյլաթ բանկ» ՓԲԸ- ն պարտավոր է ներկայացնել հաշվետվություններ այն ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ, ովքեր հանդիսանում են Մ.Ն. հարկատուներ (հարկային ռեզիդենտներ):

Ֆիզիկական (ներառյալ Ա/Ձ) և իրավաբանական անձանց Մ.Ն. հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար Բանկն իրականացնում է հաճախորդներից լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

## Մ.Ն. հարկային ռեզիդենտի չափանիշներն են.

1. Մ.Ն. հարկատու ֆիզիկական անձ (ներառյալ Ա/Ձ) է համարվում Մ.Ն. քաղաքացին կամ Մ.Ն. հարկային ռեզիդենտը: Հաճախորդը հանդիսանում է Մ.Ն. հարկային ռեզիդենտ, եթե համապատասխանում է հետևյալ չափանիշներից որևէ մեկին՝

- 1) հանդիսանում է Մ.Ն. ռեզիդենտ («Green card»-ի /ձև I-551/ սեփականատեր),
- 2) հանդիսանում է Մ.Ն. քաղաքացի,
- 3) ծնվել կամ բնակվում է Մ.Ն.-ում,
- 4) ֆիզիկապես գտնվել է Մ.Ն.-ում առնվազն 31 օր ընթացիկ տարում, և 183 օր երեք տարվա ընթացքում (ներառվում է ընթացիկ տարին և անմիջապես նախորդող երկու տարիները՝ հաշվի առնելով ընթացիկ տարում Մ.Ն.-ում գտնվելու բոլոր օրերը, ընթացիկ տարվան նախորդող

առաջին տարում Մ.Ն.-ում գտնվելու օրերի 1/3-ը, և ընթացիկ տարվան նախորդող երկրորդ տարում Մ.Ն.-ում գտնվելու օրերի 1/6-ը):

### Օրինակ՝

2013թ.-ին անձը Մ.Ն. տարածքում անցկացրել է 130 օր, 2012թ.-ին՝ 120 օր, 2011թ.-ին՝ 120 օր: Այսպիսով հաշվարկը կիրականացվի հետևյալ կերպ.  $(130 + 120 * 1/3 + 120 * 1/6) = 190$ : Քանի որ օրերի ընդամենը քանակը գերազանցում է 183 օրը և ընթացիկ տարում անձը Մ.Ն.-ում անցկացրել է 31 օրից ավելի, ապա 2013թ.-ին անձը կճանաչվի Մ.Ն. հարկային ռեզիդենտ:

5) ունի վավեր Մ.Ն. ռեզիդենտի հասցե (ներառյալ Մ.Ն. փոստարկղ / U.S. Post Office Box/), կամ

6) ունի վավեր փոստային հասցե Մ.Ն.-ում (ներառյալ Մ.Ն. փոստարկղ /U.S. Post Office Box/),

7) այլ՝ համաձայն FATCA օրենքի պահանջների:

2. Մ.Ն. հարկատու իրավաբանական անձ է համարվում Մ.Ն. հարկային ռեզիդենտ իրավաբանական անձը, եթե համապատասխանում է հետևյալ չափանիշներից որևէ մեկին՝

1) իրավաբանական անձը Մ.Ն. իրավաբանական անձ է (գրանցված է Մ.Ն.-ում (հիմնադրվել է Մ.Ն. օրենսդրության համաձայն)),

2) իրավաբանական անձը Մ.Ն. ընկերակցություն է,

3) իրավաբանական անձը Մ.Ն. հարկային ռեզիդենտի սեփականություն է,

4) իրավաբանական անձը թրասթ է, եթե Մ.Ն. դատարանը կարող է կատարել առաջին առյանի դատաքննություն, և մեկ կամ ավելի Մ.Ն. հարկային ռեզիդենտներ լիազորություն ունեն վերահսկելու թրասթի էական բոլոր որոշումները,

5) իրավաբանական անձն ունի Մ.Ն. նշանակալի սեփականատերեր (հիմնադիրը/հիմնադիրները տիրապետում է/են տվյալ ձեռնարկության բաժնետոմսերի 10%-ից ավելիին),

6) իրավաբանական անձ սեփականատերերի (վերահսկող անձանց) կազմում ներառված են ֆիզիկական և իրավաբանական անձիք, որոնք հանդիսանում են Մ.Ն.-ի հարկատուներ,

7) իրավաբանական անձը հանդիսանում է Մ.Ն.-ի հարկատու, եթե իր ակցիաների (քվեարկությամբ կամ գումարային արժեքով ուղղակի կամ անուղղակի մասնակցություն) 10 տոկոսից ավելին պատկանում է՝

ա) ֆիզիկական անձին, ով ճանաչվում է Մ.Ն. հարկատու (specified U.S. person),

բ) իրավաբանական անձին, որը գրանցված է/ հիմնադրված է Մ.Ն.-ի տարածքում, և չի պատկանում այն իրավաբանական անձանց դասին, որոնք բացառված են հատուկ նշված հարկային ռեզիդենտների կազմից, եթե այդպիսի ընկերության համախառն եկամտի (առանձին-առանձին կամ միասին) 50 տոկոսից ավելին նախորդ տարում կազմում է «պասիվ եկամուտներ», և իրավաբանական անձի ակտիվների միջին կշռված մեծության 50 տոկոսից ավելին (եռամսյակի վերջում) (առանձին-առանձին կամ միասին) կազմում են ակտիվներ, որոնք բերում են այդպիսի եկամուտ:

8) ունի Մ.Ն. ռեզիդենտության կամ Մ.Ն. փոստային վավեր հասցե,

- 9) ի լրումն Մ.Ն.- ից դուրս իրավաբանական անձի հեռախոսահամարի ունի նաև Մ.Ն. վավեր հեռախոսահամար (երկրի կոդը սկսվում է «001»-ով),  
10) այլ՝ համաձայն FATCA օրենքի պահանջների:

3. «Չհամաձայնող» հաճախորդներ/հաշիվներ (Recalcitrant accounts) են համարվում այն հաճախորդները, ովքեր հրաժարվում են «Մելլաթ բանկ» ՓԲԸ- ին տրամադրել տեղեկատվություն, համաձայն որի կբացահայտվի նրանց ԱՄՆ հարկատու լինելու հանգամանքը, կամ հրաժարվում են որպեսզի Բանկն իրենց, իրենց հաշիվների և եկամուտների վերաբերյալ տեղեկություն/հաշվետվություն տրամադրի ԱՄՆ հարկային ծառայությանը:

«Չհամաձայնող» հաշիվների դեպքում կիրականացվի 30% (երեսուն տոկոս) հարկի գանձում ԱՄՆ ծագում ունեցող եկամուտներից (տոկոսային վճարումներ, շահաբաժիններ, վարձակալական վճարներ, ռոյալթիներ, աշխատավարձ, անուիտետներ, շահույթներ և այլ եկամուտներ, որոնք գոյացել են ԱՄՆ-ում կամ արդյունավետորեն կապված են ԱՄՆ-ում իրականացվող բիզնեսի կամ առևտրի հետ):